



88. ՃԱՂԱՑՊԱՆԻ ՆԱՂԸԼԸ

Քոհնան դավրմը մին թաքավոր ա ինըմ, շատ սիրիլիս ա ինըմ չորերը փոխած տոնս կնլ, երգըմը ման կնլ, որ ուրն աչկովը տենա իչ կա, իչ չըկա, ուրն անգաջովը լսի՝ ով ա կոհ ուրն թաքավորութունիցը, ո՞վ ա տոկո: Շտեղ էլ որ մննըմ ա ժողովուրթի մեչը, ջուռա-ջուռա հարցեր ա տալիս: Ով կարըմ ա ջուղաբը տալ, ընդան լնվ-լնվ փեչքանչնի յա տալիս:

Օրերիցը մին օր էլ մին հարուստ ու փորցված մելիքի տուն ա ղոնաղ ընգնըմ հու էլհն ուրն հարցմունքներովը մելիքիս նեղն ա լծըմ: Մելիքը կարըմ չի, թն ջուղաբը տա, հու սըհենց մանթնլ կտրած՝ նստըմ ա տան շեմքին, փիքըր ա անըմ:

Էտ վախտը մելիքին ա մոտանըմ ուրն ճաղացականը, կլոխ ա տալիս հու հրըցնըմ.—Մելի՛քն ապրած կենա, էտ խի՞ ես մտկի ծովն ընգել:

—Բա ինչ անեմ,—ասըմ ա մելիքը,—մին ղարիբ ղոնաղ ունեմ, չորս հարցմունք արավ, ոչ մինին էլ ա կարացի ոչ, թն ջուղաբ տամ, ամոթիցը ուզըմ չեմ կուշտը քինան: Բա ես մելիք ինեմ հու կարամ ոչ ընդրա ջուղաբը տա՞մ:

—Դնրդ մի՛ անիլ, մելի՛ք Մուղսի, Աստոծ էրկու երանին մինին չի տալիս, չորերըտ տուր, ես հաքնեմ, քինան ջուղաբը տամ, հնլնան մին զատ էլ էվելի:

Ճարը կտրած՝ մելիքը ուրն չորերը տալիս ա ճաղացականին, էս էլ հըքնըմ ա, քինըմ ղոնաղի կուշտը:

—Հը, մելի՛ք, ջուղաբնին պերա՞ր,—հըրցնըմ ա ղոնաղը:

—Հա՛, արևի՛տ ղուրբան, պերա: Մ՛հի տոն մին-մին հարցմունքըտ արա՛, ես էլ մին-մին ջուղաբը տամ:

—Որ ըտենց ա, մ՛հի ասա՛, աչխարքիս մեչտեղը շտե՞ղ ա:

—Ախր ինչի ասեմ, ավելի լնվ ա վե կաց քինանը, նշանց տամ:

Տոնս են կնլիս մննըմ մելիքի արտը, ճաղացականը աչ ա քինըմ, ծնլս ա քինըմ, վերչը կաղնըմ ա մին զահմանաքարի կշտի հու ասըմ՝ էս ա, որ կա: Թն վհատըմ չես, տո՛ւ չափի:

—Չէ՛, ախպե՛ր, վհատում եմ, մհի էլ ասա՛ տենամ՝ ես ո՞վ եմ:

—Մարթի աշկերը քոտ պիղի ինեն, որ ուրա՛ն թաքավորին ճընանչի ոչ:

—Մաշալլա՛հ: Էդ մինին էլ դո՛ւզ ջուղաբ տվար, լսի՛ իրեքինջի հարցմունքս. ասա՛ տենամ՝ ես ի՞նչ եմ մտածում:

—Թաքավո՛րն ապրած կենա, տո՛ւ մտածում ես, թա՛ն քո՛ւ չիմմ մեկիքնին ու թավաղնին խելունք են, համա տհենց չի:

—Լա՛՛վ, դե վերչին հարցմունքս լսի՛: Ես ինչ պանի եմ վհատում:

—Թաքավո՛րն ապրած կենա, տո՛ւ վհատում ես, թա՛ն ես մեկիքն եմ, համա չարաչար յանդիչ ես: Ես ընդրա ճաղացականն եմ:

—Երանի չիմ մեկիքնիս քու խելքին ինին,—ասում ա թաքավորը մին պո՛ւռը ոսկի յա տալիս ճաղացականին, մեկիքի տանիցը քինում:

Աս ա կենում մին խելի վախտ: Թաքավորը ուրա՛ն վանգիրի հետ էլհամ չո՛րերը փոխում ա, տո՛ւս կալիս ման կալի: Ճընապորցիցը մինումը մին էլ են տենում, հեսա մին բիճա՛ն նստած քինող-եկողից ողորմութուն ա ուզում:

Թաքավորը մոտկանում ա ուզողին, տենում ա համին մեկիքի համին ճաղացականն ա, ասում ա. —Պարի՛ լո՛ւս, ճաղացական ապեր:

—Թո Աստոճ պարին կլխիցտ անպակաս անի, թաքավո՛ր:

—Ա՛յ ապեր, բա ի՞զ վրա՛ն թաքավորի դո՛ւլթո՛ւ կա,—ծիծաղում ա թաքավորը:

—Թաքավո՛րն ապրած կենա, կուզի մի քիչ պառավել եմ, հա՛մա աշկըս հալա՛ն լավ ա ճուկում, թա՛ն որն ա թաքավորը, որն ա ուրա՛ն վանգիրը:

—Լա՛՛վ, բա ճաղացըտ իչ պանի յա:

—Թաքավո՛րն ապրած կենա, մեկիքը մեռավ, ճաղացը քանդ-վեց, համա սեփական ճաղացըս հալա՛ն լավ ա, անջաղ աղուն չըկա, որ աղա:

—Էտ հեչ, աղուն կըճարվի, տո՛ւ ո՞նց ես:

—Ոնց պիղի ինեմ, թաքավորը մեր կլխիցը անպակաս ինի, էրկուսըս արել եմ իրեք:

—Բա որ էտ գիղում իր, խի՞ չո՛ւտ չըզարթնեցիր:

—Թաքավորի արեն ապրի, չո՛ւտ եմ զարթնել, է՛, համա ինչ անիմ, որ իլածըս ուրիշը տարավ,—հոքոց ա հանում ճաղացականը:

—Ապե՛ր, թա՛ն որ կուշտըտ մին չաղլիկ դազ դրկեմ, կարա՞ս բո՛ւմբո՛ւկահան անես:

—Թաքավորի արեը համա՛նչ պեծպեծին անի, նհենց բո՛ւմբո՛ւկահան անեմ, ոնց որ սիրտըտ կուզի,—ասում ա ճաղացականը հու մը-րուքը թո՛ւմարմ:

Թաքավորը էլ ոչ մի պան ասում չի, մին քանի ոսկի յա քցում ճաղացականի փափաղը հու վանգիրի նհետ հըղու յա ընգնում:

Ճընապին վանգիրը ասում ա.—Տե՛ր Թաքավոր, խելաք վախտ խոսացիր՝ էն բիձի հետ, համա մեխկս ինչ կաղեմ քեզանա, ոչ մի պան կլխի չընգա:

—Դե որ ըտենց ա,—ասում ա Թաքավորը,—մինչու էքուց ուս-վոտը պեղմա գիղան, թիս ես ինչ հըրցըրա, բիձեն ինձ ջուղաբ տվալ: Թիս գիղանցիր՝ գիղանցիր, թիս որ գիղանցիր ոչ, կլիսըտ թոցնիլ կը-տամ:

Վանգիրը չալվարը լցնում ա, իրեսի ոանգը քցած մինչու ընկնում մտածում ա, մտածում, կարում չի կլխի ընգնի, թիս Թաքավորն ու բի-ձեն ինչի մասի յին խոսում: Վերչը որոշում ա քինա ճաղացականին ճարի, սըռը գիղան: Դարվոնչի չորեր ա հըքնում, ծըպտըվում, քինում:

Տենում ա համին տեղըմը հեսա ճաղացականը նըստած, հա-մա պերանը հանա պանցած ոչ, ճաղացականը փափաղը հանում ա, ասում.—Այ տո՛ւ պարո՛վ, հազա՛ր պարին ես եկել, վանգի՛ր ջան, էս որ քամին ա քե քչել էս ղոլերը:

Վանգիրն էլ վախտ չի կորցնում, ասում ա, թիս ինչի մհար ա եկել:

—Մհի իմ գյանքը քու ծեռին ա, թիս ասես ոչ՝ երեգ ինչ իք խո-սում Թաքավորի նհետ, Թաքավորը կլիսըս թոցնիլու վա:

Ճաղացականը վանգիրի նհետ պայման ա կապում, ամման մի ջու-ղաբի մհար վանգիրը մին քիսա ոսկի պետմա տա:

Վանգիրը փող վերկալած չի ինում նհետը, ճաղացականին պե-րում ա ուրա տունը, նըստըցնում մախմուռ պարցերի վրեն, մին լանգանթին սուփրա յա պանց անում, ոսկով լիքը չորս քիսա տնում առաչին, սպասում:

Մին կուշտ ու կուռ ուտիլից եղո ճաղացականը չըուղը քաշում ա հու ասում.—Թաքավորի էն հարցմունքին, թիս ճաղացըտ իչ պանի յա, ջուղաբ տվի, որ ճաղացըս հանա սարքին ա, համա աղուն չըկա, որ աղա: Այսինքս, չիմ կեռքնիս սաղ-սալամաթ են, համա ուտիլի պան չըկա: էն մին հարցմունքին, թիս ո՞նց ես, ասեցի, որ էրկուսն իրեք եմ չինել: Այսինքս, պառավել եմ, փեղով եմ ման կանխ, էրկու ոտըս իրեք ա տանել:

Իրեքինջի հարցմունքին, թիս՝ էտ որ գիղում իր, խի՞ չոտ չըղանթեցիր, յանի թիս խի՞ չոտ չըփաակվեցիր, որ բալեքըտ քե պահեն: Ասեցի, որ չոտ եմ զանթեցել, է, համա իլածը ուրիշն ա տարել: Այսինքս, չոտ եմ փըսակվել, համա ախճիկ ա իլել, ուրիշն ա տարել:

—Բա վերչի հարցմունքն ինչ ղազի մասի էր:

—Վնգի՛րն ապրած կենա, էտ ջուղաբը տալու չեմ, մինչու հա-
քիս էս քնձոռտ ջինթեքը թնգն շորերով փոխես ոչ:

Վնգիրն ուրն թնգն շորերիցը մին ծեռք պերըմ տամ ա
ճաղացպանին, էս էլ առոք-փառոք հըքնըմ ա, էդո ասըմ. —Թն որ
հոքուս մեխկը չանեմ, էտ դազն էլ տո՛ւ ես, որ կնս, աղա՛ վնգիր,
թաքավորը քե ղըրկել ա կուչտըս, որ բոմբո՛ւլահան անեմ, դե ես
էլ արեցի: Մ՛հի մնաս պարով, ես քինացի:

Աստանա մարթին, կարողութունից սավայի, պետմա մի քիչ էլ
խելք պաժին հըսնի, թնչնն չէ վնգիր տնոննլով կարալ չես կլոխ
պահես, ոչ էլ ճաղացպան ինիլով խանչալիտ քարը կընգնի:

